

Սա-Կորնէ՛ այսինքն՝ Ազոսի լեռան քով (անդ. 83): Գիցարանական այս աչքի զարնող պարագայով հետեւեալ երկու եղբակացու- թիւններու կը յանգինք. նախ թէ Մհերի եւ Ամիրանի առասպելները շատ աւելի հին եւ սկզբնական են քան Արտաւազդի կամ Շի- դարիները, որոնք դիցաբանական անխառն տարրեր ալ չեն, պատմութիւնն ալ իր որոշ դերն ունի անոնց մէջ¹: Հայ հին մատենագրութեան մէջ Մհերի նկատմամբ որեւէ յիշատակութեան չհանդիպելը՝ անով կրնայ մեկնուիլ, որ լեռան փոխուող կամ լեռան մէջ փակուող թերեւս Մհեր ինքնին չէր, այլ իր որդին, ինչպէս Կեղծ-Պղտարբոս կ'աւանդէ: Անոր համար կը համարիմ թէ վաղաժամ է տակաւին Մեծ Մհերը, որ նաեւ Առիւծաձեւ Մհեր կ'ա- նուանուի, Պատիկ Մհերին կամ Մհերիկին հետ նոյնացընել, ինչպէս սովորաբար կը պատահի:

Երկրորդ եղբակացութիւնը առաջնոյն հե- տեւութիւնն է, այսինքն թէ հնութեան մէջ Մհերի առասպելին տարածութեան շրջա- նակը աւելի ընդարձակ եղած ըլլալու է քան որ ժողովրդական գրոյցները կ'աւան- դեն: Ասով կը մերձենանք արդէն Այրարատի երբեմնի պողալիք եւ ծաղկալիք դաշտին եւ կամրջկոտոր Երասխայ քաղցրատեսիլ ափերուն, ուր կը բարձրանայ ամէն հայ սրտի այնչափ մտա Մասիսը: Առասպելը Գիորգիոսի լեռ անուան տակ ապահով զայս կ'ակնարկէ: Հոս մեզի օգ- նութեան ձեռք կը կարկատէ նախ ինքնին իսկ առասպելը. վասն զի՝ ինչպէս շատ սրամիտ կեր- պով արդէն մտադիր եղած է Ալեշան², *Διόρφοσ* թարգմանութիւն ըլլալու է հայ անուան մը, որ մերձաւորապէս մութ կամ մթին պիտի նշա- նակէր — Ալեշանի կարծիքով *Διόρφοσ* մութը թափանցող միայն կրնայ նշանակել: Արդ Մա- սիս լեռը հայ ժողովուրդէն կ'անուանուի նաեւ մթին լեռ, սեւ լեռ, մառախլապատ լեռ³: Յու- նարէն *ὁ διόρφοσ* բառ մըն ալ կայ, որ կը նշա- նակէ «կրկնատանիք» կամ «ծածկուած բան մը»: Այս բառն ալ կարելի է կարծեմ նկատողութեան առնուլ, քանի որ լեռան փոխուող հերոս ըսելով

¹ Արաբական Շիդարի պատմականութիւնը չ'ըն- դունիք թերեւս անոր համար որ մատենագրութիւնը մեկ ցած ոգիներ են: Չանոնք համեմատել կ'ուզէ աւելի իշխարի հետ. որով սակայն ըստմութիւն Չիդարիներու հարցը կը մնայ դարձեալ լուծման կարօտ, *անդ*, 104:
² Հին հաւատք Հայոց, էջ 36:
³ Անդ. 36. Հմմտ. նաեւ Fr. Murad, Ararat und Masis, էջ 51, ծն. 1:

ժողովուրդը սովորաբար աւելի լեռան մէջ ծած- կուած կամ փակուած կը հասկընայ: Եւ Մա- սիսի մէջ փակուած է Արտաւազդ՝ յաջորդը այն աստուածագրի հերոսին, որ յունացած կեղծ անունով մը մեզի կ'աւանդուի: Երկու առաս- պելներուն ալ լեռներու նոյնութիւնը տարա- կոյսէ դուրս է. ասոր նոր եւ վերջին փաստն է Գիորգիոսի հակառակորդը՝ այսինքն Արէոս, որ ինչպէս ուրիշ առթիւ արդէն մտադիր ըրած եմ¹, միայն Արայ Գեղեցիկը կրնայ ըլլալ: Ահա թէ ինչու. Մասիսի ստորոտը տարածուող դաշտը Անանուն եւ անոր հետեւելով նաեւ Խորենացին «Արայի դաշտ» կ'անուանեն. հոն եղած է նաեւ Շամիրամի Արայի դէմ մղած պատերազմը: Արագածի դէպի Այրարատի դաշտը երկարող լեռնաշղթաներէն մին ուղղակի «Արայի լեռ» կը յորջորջուի դեռ մինչեւ այսօր- նոյն լեռան քովերը կը գտնուի Արայի անու- նով գիւղ մը, որ այսօր դժբախտաբար ամ- բողջապէս կործանած է: Կը պատմուի թէ Արայ հոն սպաննուած եւ թաղուած ըլլայ. ճիշտ նոյն գիւղին դիմաց կայ բլուր մը, որ «Շամիրամայ լեռ» յորջորջանքը տակաւին կը կրէ: Քարայր մըն ալ կայ այս կողմերը՝ հիմայ նուիրուած Ս. Առավառիայի, ուր սակայն ուխտի կ'երթան գլխաւորաբար Համբարձման տօնին²: Պէտք չէ հոս յիշել նաեւ աւանդութիւն մը, որուն համաձայն Ասսպուրականի մէջ մի եւ նոյն տօնին առթիւ «կ'ասեն» ամեն յամբարձման գիշեր Մհերի քարի տիւր կը բացուի... Մէկ տա- րեկան խարս ի տեսի... Քարի տիւր բացուի, Մհեր քարի միջէն ելի ի»³:

Այս գլուխը չփակած՝ հարկ կը համարիմ անդրադառնալու նաեւ ուրիշ կարեւոր կէտի մը, որուն չափով մը ինձմէ յառաջ արդէն ուրիշ- ներ ալ մտադիր եղած են: «Աչքի է ընկնում, կ'ըսէ Ստ. Կանայեանց»⁴ եւ այս հանգամանքը, եթէ Ազատ Մասիսում արգիլուած է Արաշէսի որդի Երտաւազդը, Ասսպուրականի Տոսպում եւ Ագուաւքարում փակուած է Մհերը իրանց հայրերի անէծքով. աւանդութիւններ, որոնք եթէ նոյն էլ չեն, բայց շատ նման են: Ուրիշ տեղ մը՝ «Աչքի է ընկնում, կ'ըսէ նոյն հեղի- նակը, որ հարաւում յիշուում են անուններ, որ կան հիւսիսում, մասնաւորապէս Այրարատում»:

¹ Կրօնի ծագում եւ Գիցարանութիւն, էջ 210:
² Ալեշան, Արարատ, էջ 161:
³ Մ. Արեղեան, Դատիք եւ Մհեր, էջ 59. առ Գ. Արաբեկեան, *անդ* 79:
⁴ Արբ. 1913. էջ 659:

Այսպէս Արտիմէտ (Խոր. Բ. ԿԵ. 144), Մարա- մատ = Մարմա (Գ. Տէր-Մկրտչեան, Անանիա, էջ 15), Երուանդաւան (Խոր. Բ. ԽԶ. 123) եւ Երուանդաշատ (անդ. Բ. ԼԹ. 117), եւ այլն: Աչքի չի՞ զարներ նաեւ այն հանգամանքը, որ թէ Արարատի եւ թէ Ասսպուրականի ամենա- մեծ լեռները Մասիս կ'անուանուին, մին Ազատ Մասիս, միւսը «Կիս Մասիք», որ ինչպէս Hübschmann¹ արդէն նկատած է, Փաւստոսի «մեծ լեռնն Մասեաց»ի (Գ. Ի. 52) հետ նոյն է. եւ այս՝ Սիսիան լեռն է: Ասոնց վրայ կ'աւել- նայ Արայի առասպելը, որ երկու նահանգներուն մէջ ալ ինքնուրոյն աւանդութիւններով իր տեղերը ունի: Այս աշխարհագրական, ազգախօսական-դիցաբանական զարմանալի երե- տյամները զմեզ ազգային պատմութեան ամենա- հին շրջանները կը փոխադրեն. քաղաքակրթա- կան հետքերն են ասոնք գաղթող եւ բնակու- թիւն փնտոող նախնի շայրուն, որոնք իրենց նոր հայրենիք մտան աւելի հարաւ-արեւմուտ- քէն: Ամէն կողմանէ նեղուած Ռարտացիները թողով յաղթողներուն իրենց սիրելի Տուսպան ու Բիանան՝ գաղթեցին Այրարատայ նահանգը, ուր դեռ բաւական ժամանակ մնացին իրենց առանձին թագաւորներով ու քաղաքներով: Բայց Հայերը զերեքը ասկից ալ վաճակեցին. մաս մը հաւանօրէն Կաւկասեան լեռները ապաւինե- ցան եւ մաս մըն ալ Բարձր Հայքի եւ Տայքի վրայէն յետոյ իրենց անունով Խաղտիք կոչուած երկիրը անցան:

ԳՈՒՑ. Հ. Ա. ՄԱՏԻՍԿԵԱՆ



¹ Arm. Ortsnamen, էջ 324, 370, 396. Հմմտ. նաեւ Ազգ. Ման. Եր. Վիեննա, 1907, էջ 187, 260:

ՖԵԼԻՔՍ ՕՍՎԱԼԴ
ԵՐԿՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԳԵՐՄ. ԹՐԳՄ.
ՕՏՏՈՅ ՎԻԼՔԷՆՍ
ԳԵՐՄԱՆՆԵՐԷՆ ԲՆԱԳՐԷՆ ՓՈԽԱԳՐՈՒԱԾ ՀԱՅԵՐԷՆԻ
(Շարունակում թիւնն):
Բ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՐԱՀԱՐԹԸ

27. — Հիւսիսային եւ հարաւային եղբայրներէ պարփակուած շրջանակը Սա- րահարթի մը յատկանիշները կը ցուցընէ: Սակայն շատ լաւ կը թոյլատրէ՝ անդրազոյն բաժանում ընելու: Յայտնի է թէ, — երբ շոշափողական (tangential) անդիմադրելի ճ'նշում մը գործուի դիմացկուն լայն զան- գուածի մը վրայ, եւ ասի միայն այն կերպով տեղի տայ որ իրարու վրայ անցնող հողաբա- ժինները խորտակէ, — հողաբաժիններուն ասկէ ծագող վերամուղ ճ'նշումը պէտք է որ դուրսը սաստկազոյն, իսկ անգործ զանգուա- ծին դէպ ի ներսն երթալով նուազազոյն ըլլայ: Ուստի երբ ճ'նշումը տեւական ըլլայ, արտաքին հողաբաժինները հետեւաբար պիտի ջանան իրենց ներքին շուրթն աւելի մեծազոյն բարձրութեան մը մղել հանել քան թէ կենդրոնական հողաբաժինները: Այսպէս ալ եղբայրանց մէջ հողաբաժին- ներուն գազաթնաշղթունք կը հասնին 3000—3700 մետր բարձրութեանց, մինչ- դեռ Կենդրոնական Սարահարթին գազաթ- ները միջին հաշուով 1500 է մինչեւ 1800 մետր բարձրութեանց վրայ կը մնան, (ի բաց առնելով հրաբուղիներուն բարձրակուտակ կոները):

Հայաստանի հիւսիսային կիսուն մէջ կարելի է երկու զօտիներ զանազանել, որոնց նկարագիրը միջին է եղբայրանց ու կենդրո- նական սարահարթին միջեւ, այսինքն՝

1. Գայլգետ-ճորոխ գօտի, Պոնտական հողաբաժնին ներքին երեսին վրայ, եւ
2. Դարալագեազի գօտի, Սեւանայ եւ Ղարաբաղի հողաբաժններուն ներքին երեսին վրայ:

1. Գայլգետ-ճորոխ գօտին:

Պոնտական հողաբաժնին խիստ հակադրութեամբ Գայլգետ-ճորոխ գօտին սաստիկ ծալում կը ցուցնէ: Ասոր մէջ լայն աեղ մը կը զրաւէ Ներքին-Կաւիճը (ի մասնաւորի Նորահողը), որ Մոտորջրոյ⁵⁶ եւ Արդունի շրջանակին՝ ճորոխի հովտին ներքնակողման մէջ՝ հին հերձաքարերուն վրայ նստած է: Այս հերձաքարերը կը գտնուին նաեւ Կանդի եւ Վալիսները՝ Օլթիի աւազանին մէջ: Գօտայն արեւելեան մասին մէջ լաւ զարգացած է Վերին-Կաւիճը, յատկապէս Սեւոնը: Գայլգետի աւազանին մէջ մեծ ծաւալ մը կը ծածկէ Վյարդեակը, եւ մեծազանցում թանձրութեան ալ կը հասնի: Նշանաւոր է իւր Դրամանեցեաց ահազին քանակութեամբն ու պէսպիսութեամբն: Կերեւայ թէ Այգարդեկային տարիք ունի Քարահանի⁵⁷ ածուխը՝ ճորոխի

⁵⁶ Գրուած Khodudjur, որու մասին համա. Օւլ-Լէր, «Երկրաբ.», էջ 266. ուր յառաջ բերուած են ք-ի գիտողութիւնները (Koch, Reise etc. II, 83-90, էւն): — Յարդեակներէն՝ Kanly-D. եւ Ak-Dagh, վերջինս Լինչի քարաեւր լաւագոյն կը գրէ՝ Akh-D. (1944 ոտք.) նոյնպէս Ռուսականը. որովհետեւ անունը կապ ունի Միւր գիւղի անունին հետ:

⁵⁷ Գրուած Karakhan, ինչպէս արդէն տեսնուիր. — գերմ. Agbaba գրուածը Լինչ կը գրէ Akhbaba, որուն արեւմուտքն է Khoshab-Punart լեռնանցքը՝ 8623 ոտք. մինչ Kop-Dի լեռնանցքը նշանակուած է 8048 ոտք: Բայց Խաւթ-գօտնոր անունն աեղ Ռուսականը կը գրէ «Խալթ-պունար» (Kodja-punart, բարձրութիւնն ալ՝ 8800 ոտք.) Կերեւայ հին քարաեւր նոյնպէս Chodjapunart, բայց նորագոյնը (թերթի կարին)՝ Choshab Punar (Kagort D., Otluks-D. Լինչի քարաեւր գիւղը՝ 2980 մ. բարձր: Իսկ մը նշանակուած է, կարծես պարունակելով նաեւ այն լեռը՝ որ կը գրուի Agly-D., Akh-pungar (Ռուս.) էւն: (Կիւպերտի նորագոյնը՝ Otluks beli.) — Քանի մ'անգամ յիշուած Սիպիկոր (Սիպիկոր, Ս. Գրեթեր) լեռը հոս գրուած է մինչեւ անգամ՝ Sipikör, եր թէ աւարաբ թրք.-kör (կար) բառն ըլլար: Բայց սովորական գրութիւնն է՝ Sipikör, (Ռուս. Sipikar), եւ նոյնպէս՝ համանուն գիւղը՝ 8338 ոտք. միւրը՝ 7580 ոտք.) եւ հարաւարեւմուտքը՝ բուն Սիպիկոր լեռան (Գահանա, գրուած՝ Լինչ Kobanar, ոտք. 7580 ոտք. էւն):

աւազանին մէջ, Սպերի հարաւակողմը: Օլթիի եւ Թորթուլի գետոյ աւազանը Նուազարդեկէ ծածկուած շրջանակ մըն է համեմատաբար խորասուզած: Բաց աստի Նուազարդեակ կը գտնուի Գայլգետ-ճորոխ գօտայն մէջ՝ իւր հարաւային եզերքը, զոր կը գծեն գագաթներս՝ Ախրաբա, Մօշարպունար, Քոփ, Օթլուկ, եւ Սիպիկոր:

2. Դարալագեազի գօտին:

Դարալագեազի գօտին ծալում շրջանակ մըն է: Կը գտնուի մէկ կողմանէ Սեւանայ եւ Ղարաբաղի հողաբաժններուն եւ միւս կողմանէ Միջին-Նորասոյ գնտածին միջեւ: Այս երկրաբաժնիս մէջ իբրեւ կենդրոնական զանգուած կը բարձրանայ ճառագայթած եւ ձորերու ախտուած՝ Քեսասնեայա-Դմբեթարդը, որ կազմուած է բլուրեղական հերձաքարերէ, Դեւոնէ, Աճխէ, Պերմոսարիասէ, Միջին-Յուրայէ, Ներքին եւ Վերին Կաւիճէ, Այգարդեկէ եւ Նուազարդեկէ: Քեսասնեայա-Դմբեթարդին, զոր չորս կողմանէ կը պատեն Կաւիճի եւ Այգարդեկի ծովափնային մըրախաւեր, եւ Արեւմտեան Ղարաբաղի միջեւ՝ կը տարածուի Այգարդեկային ընդարձակածաւալ աւազան մը, զոր ձեղքելով կընդհատեն Իլանլուի, Դարուի, Ասաղիքեֆի եւ Նաղաճերի⁵⁸ Վհարերը (Lakkolith): Հիւսիսակողմն ու արեւմտակողմը կեցած են Մալչքէնդի (Մալչկայի) եւ Ողջաբերդի («Օգտաբերդ») Սակաւարդեկի մնացորդները: Դեւոն ու

Kokhanum, էւն) մէկ գագաթին վրայ Լինչ կը նշանակէ Sipidagh գիւղ մը: Կիպերտի նորագոյնը կրկին Sipikör գիւղ ունի, իսկ լեռը՝ «Ak (Sipikör) D.» կը գրէ. որմէ հարաւ՝ Dadian D.:

⁵⁸ Ընուններս գրուած են գերմ. Ilanly, Dary, Asabkev, Nagadjir. Եւ Լալայեանի քարտեւը («Շարուրդ էւն») կը գրէ կարգաւ՝ Իլանլու (նոյն՝ Ռուս. 7976 ոտք. «Երկրաբ.» կամ Բօլու սար՝ «Սիս.» 348, 381). — Գորբեգաւ (անշուշտ ուղղել՝ Գորբեգ, Dagrü-D. 6375 ոտք. Գորբեգ եւ Գորբեգ՝ «Սիս.» 198, 348, 409, 460). — Եւ Եւրոպիայէ Օսվալդ «Երկրաբ.» էջ 405-406, 460). — Եւ Եւրոպիայէ (Կերեւայ ուղղել՝ Եւրոպի, համա. Ասաղի-թաղ՝ «Սիս.» 381. միւսները չեն նշանակած). — Նաղաճեր (լեռ՝ 5971 ոտք. գիւղը՝ Նաղաճեր). նաեւ Ռուս. Nagadjir. «Սիս.» չունի): — Մալչկայ, Ողջաբերդ էւն՝ արդէն յիշուած են:

Աճուխ կը կազմեն Գօտայն ներքին եզրը, որ Նրասոյ խորանտին կը սահմանակցի:

3. Կենդրոնական Սարահարթը:

Կենդրոնական Սարահարթը շրջանակ մը կը ներկայացնէ, ուր խորասակեալ հողաբաժններուն խորասուզումն աւելի սաստիկ եղած է քան արտաքին գօտայն մէջ, եւ ուր հրաբխային գործունէութիւնն ու գնդային արտայայտուած է: Փապարունիերուն յառաջ բերած գնտածներուն մէջ Յողվարդեկի միջոցին լճեր կազմուած են, որոնք լեցուած են լճային մըրախաւերով, շեղքաւերով եւ վրան՝ վերջապէս հրաբխային ահազին ծածկոյթներով. վերջինքս՝ ամէնէն աւելի սաստրած են Սարահարթային նկարագիրը սաստիկացնելու՝ քան միւս ամէնքը:

Եթէ Հիւսիսէն դէպի Հարաւ երթանք՝ սարահարթային նկարագիրն ամէնէն աւելի սաստիկ բնորոշուած կը գտնուի Ռուսական Հայաստանի հրաբխային սարահարթներուն վրայ: Արեւելքէն եւ արեւմուտքէն այս շրջանակը խստորէն կը սահմանագծուի հրաբուղներուն համադիժ շարքերով, որոնք միջօրէական ուղղութիւն ունեցող բեկումներուն երկայնքն երկնաբերձ բարձրացած են: Այս շարքերուն արեւմտայինը⁵⁹

⁵⁹ Թէ բեկումները եւ թէ հրաբխային գծերն ու շարքերը (կարմրագիծ) ներկայացուցած է Օսվալդ առանձին քարտեւով մը՝ ընդարձակին սկիզբը գրուած, «Կարմրական քարտեւ Հայաստանի», — Ընունն ուղղագրութիւնն են գերմ. Arzian (նոյնպէս Լինչ, Լրիճ՝ Geol. Forsch. III, 19 էւն). սովորաբար Arsian, եւ մեր նախնիք ալ կը գրեն Ար-իւն (համա. Զուանլիք, էջ 24 էւն, բայց «Արսիան»՝ անգլ. էջ 71): — Bilbulanի (այլք՝ Bil-bulan, 9878 ոտք) եւ Allah-akbarի (10.218 ոտք) միջեւ քարտեւները կը նշանակեն շարք մը լեռներու, որոնց մէջ չենք գտած Zemin լեռ, որ անունը կը մնայ ստուգելի, եթէ չէ Ziaret (8217 ոտք). — Soganly, այսինքն՝ Սօղալու, նախնեաց Մեթրոյ լեռնէք (համա. «Արարատ», էջ 70, էւն). — Kuseh-D. (նոյնպէս Լինչ էւն) կամ նման ձեւեր (ուս. Kessa-D., Լրիճ՝ Kös a dagh, այլք՝ նաեւ Kussa-D. էւն, 11.262 ոտք). թրք. քէօսէ՝ թրքական բառաձեւի մը վերածուած է (պարսկ. թրք. քէօսէ՝ քարձ). բուն մնացորդ է քօլեց անուանակոչութիւնէ, ինչպէս կը կոչուէր Սօլա-կամ Սօլա-թօ լեռը (համա. «Արարատ», էջ 521, 536-538, էւն). — Kartewin լեռ. աեւ վերը, § 23: — Sipan D. Սիպանի մասին երկայնքն եւ յաճախ գրած է նաեւ Լինչ, սեպերով եւ գագաթան քարտեւով (համա. ի մասնաւորի

սիպերով Արսիանի խմբէն (2673 մետր), Ախալցխոյ արեւմտակողմը, դէպ ի հարաւ կը ձգուի Բիլբուլանի, Զէմինի եւ Ալա-Ալքարի (3144 մետր) վրայէն՝ հասնելով Սողանլուի հոսաքարային եւ վանակատեայ կոները եւ Քէօսէ-Դաղի (Սուկաւ) խոտաքար-գմբեթարդը (3471 մետր): Փոքրիկ ընդհատութիւնէ մ'ետքը՝ կրնանք այս գիծը կարտեւանի վրայով դէպ ի աւելի հարաւ շարունակուած գտնել մինչեւ Սիպանայ գերանձուկ-անդէսաքարային կոնը Վանայ լճի վրայ: Դէպ ի հիւսիս երկարելով՝ այս գիծը կ'աւկասը կը կտրէ Նլուրսի հրաբխով: Պոնտական շրջանակին եւ Օլթիի շրջանին հանդէպ՝ հրաբխային սարահարթը յանկարծ կ'ընդհատուի սեպ զառիթափով մը. այսպէս՝ օրինակի համար Արսիան եւ Կիւմրի հրաբուղներուն արեւմտակողմը⁶⁰: Մասն՝

II, 330-339 էւն (բարձրագոյն գագաթնակէտը՝ 13.700 ոտք.) իսկ Օսվալդ (Երկրաբ., էջ 168-171) կը յիշէ նաեւ անուան մեկնութիւններ. զորոնք անգոհացոյցիչ կը գտնէ. այսինքն իբր թէ ըլլայ Սօղալու-Լինչ («Գոհացութիւն Աստուծոյ») բայց նաեւ ինքն ա. ելի հա. անուան կը գտնէ այն իրողութիւնը թէ Բեյլու-Յիստանի մէկ լեռը կը կոչուի Subh Kuh (Սօղալու լեռ), ինչպէս կը մէջնէ Sykes զօրավարը (The Thousand Miles in Persia. London 1902, p. 133) եւ Վանայ բնակիչները, կըսէ, Սիպանի ձիւնապատ գագաթը, որ Արարատէ ետին երկրորդն է, եւ արեւու ճառագայթները նախ կ'ընդհատուի, կրկին «Աստուծան լեռ» կոչուի (Subhan, համա. արար. օստգ. «այգո էւն, օստգո»՝ «Նոյն այգո»): Այս մեկնութիւններն ուղիղ չեն: Սիպանի հին անունն է Մօսէթ, զանազաններու համար Մասիս-Արարատէ՝ կոչուած Կէթ Մօսէթ, բայց լեռն աւելի որոշելու համար կոչուած է Ծիգաւ (որմէ «Սիպան»): Այս անունը բայց ի դիւզէ մը յատկապէս կը կրէ Վանայ ձորով մէկ կ'ընդհատուի Սիպանի ստորոտը, յիտոյ յաճախ գրուած Յիգաւ (այսպէս՝ թ. Մեծօփեցի, էւն): Համա. Հիւսիսէն, «Հին Հայոց տեղայն անունները», էջ 187, էւն: Հին քարաեւս մը լեռը կ'անուանէ Selban-D. — Ս. Կանայեան՝ «Սիպան կը հասնուի իբր նէլ հակագրութեամբ «Ալա-Դ» Մասեաց (համա. «Արարատ գաւառներ», Էջ. 1914). — Ալա-Եւայլ զօրոյնքը՝ Գ. Վ. Սրբ-Նոյնթեան, «Գրոց ու Բրոց», Կ. Գ. 1874, էջ 54-61 էւն: Տես նաեւ յետոյ՝ Ծ. թ.

⁶⁰ Kümri լեռան մասին (2850 մետր) համա. «Արարատ», 70. — Gori-Mokri գիծը՝ համա. Արիճ. Geol. Forsch III, 20ff. որ կը գրէ Mokri-Gori, die nassen Berge, այսինքն՝ Թաց Լեռներ, յաճախ գրուած պարզ Mokria, համա. Լալայեանի գիտողութիւնը «Ղարաղաւ կամ Մօլթեւ լեռներ անունը... Մօլթեւ(Լայ) անունն այս լեռներին տուել են Ռուսներն այն իպէսն ցեփի պատճառով, որ գոյանում է արանց վրայ օգերեւոյթային ամունափոքր նստուցքի ժամանակի էւն (համա. «Բորչալու», էջ 281): — Երօթի ի հարկէ գրուած է Alagös. — իսկ Awrin լեռը (11.400 ոտք) «Տեղագիրը կը գրէ Արարատ» էլ 11, § 13). — Salmasի այլ. ալ ձեւերուն մասին (Սալմաս, Սալմաս, Սալմաս, Սալմաս էւն) համա. Հիւսիսէն, «Հին Հայոց»

կենդանական չայաստանը կը կարէ կ'անցնի իբր բարձր, դէպ ի հարաւ գողածեւ մը կազմող լեռնող մը (կորիզ ունենալով հերձաքարեր եւ բլբլեղական քարեր, երբու կողեր պատած՝ Տուրնեան եւ Սենտ-նեան խաւեր, եւ իւր հիւսիսային եզերքին վրայ ունենալով Սակաւարդեակ ու Նուազարբեակ), տակաւին բացորոշ նշաններ պահած է Անտիտարուսեան-Նրանական յարակցութեան (Scharung), եւ պէտք ենք զատի իբր շարունակութիւն նկատել Դարա-

լազեայի ծալքին՝ զոր ընդհատած է Նրասխայ խորանիտը: Նոյնը կը շարունակուի Շահէօլ, Փալանտօքէն ու Դերջանի լեռնաշղթաներով մինչեւ Մերջան եւ Մ'նձուր («Մուզուր») լեռները (3230 մետր): Լեռնազիծն ընդհատում մը կ'ուսնայ Նրզնկայի դաշտին (1200 մետր) շեղազիլ փոսով, ուր ծովային մրրախաւեր կը գտնուին: Լեռնաշղթաներու այս կենդրոնական շարքերուն հիւսիսային կողմը կ'իյնան Բասննի եւ Կարնոյ զնտածները, որոնք երբեմն լճեր էին, եւ զորոնք հիւսիսէն կը պատեն Ղարղարազարի եւ Դոււմլի (Կապոյտ լեռ, Մասչափայտ) հրաբխային սարահարթներն, ինչպէս նաեւ Վերին-Նիքրասայ ձորին Նուազարդեակը: Հարաւէն այս միջնակայ (median) գտին՝ Լճիկի⁶³, Մնկրիկ

դէպ ի արեւմուտք կը տարածուի եւ որ (չհաշուելով լեռնաբաժիններուն եւ իւրաքանչիւր լեռանց յատուկ անունները) Թուրքերէ կը կոչուի Արշ կամ Արի Դուր, եւ որոնք այս անունը տուած են նաեւ յատկապէս Արարատ (Մեծ Մասիս) լեռին (Հմմտ. Օսմալը, էջ 364-365, 412-413. Լինչ, շատ յաճախ, յտ. I, 148, 197, 409-420, 423, 435-436. II, 10 եւն, 384 եւն, բազմաթիւ պատկերներով յտ. Թ. 101, 106, 107, 112. «Արարատ», 46, 469, 485 եւն): Անոր համար քարտեաներն աւելի կամ նուազ ընդարձակութեամբ կը նշանակեն Aghri D. (նաեւ Agbry եւն): Այսպէս՝ Լինչի քարտեար լեռնազիծը («Հայաստանի ողնաշարը» խորագիր ուրոյն զլսոյ՝ Լինչ, I, 409-420) Aghri-D. նշանակած է մեծաուսա եւ այնպիսի ընդարձակութիւնը որ կը պարունակէ նաեւ Schachyol լեռնաբաժինը՝ Արշիկերտի հիւսիսակողմը (Հմմտ. Կիպրա եւն, «Արարատ», 53, 526, 535): — Գերմ. Kargabasar կամ Kargabazar (Հմմտ. Օսմալը, էջ 43, 475. Լինչ, I, 431-432. II, 193, 203, 227, գեղեցիկ պատկեր՝ Թ. 163 «Ղարղարազար» Բասննի դաշտի վայէն, կենդրոնական Սարահարթին հարաւային եզերքէն): Բասննի հիւսիսակողման այս բարձունքները («Արարատ» էջ 15՝ «Գարկապար կամ Հասան-Կերեկ») կը հասնին արեւմուտք՝ յարակից Գերեկ լեռան հետ (Հմմտ. «Արարատ», 15-16) մինչեւ Կարնոյ այն կերճը՝ որ դէպ ի Չարեւ Եւ անկէ՝ Թորթում կը տանի. եւ այսպէս ի վերջոյ կը յարակցի Dumly լեռան հետ: Կարնոյ աղբերականց լեռնագծին այս անունը Դոււմլի (Լինչ կը գրէ անգամ Dümlü, Հմմտ. II, 209 եւն, եւ քարտեար, որ կը նշանակէ 9235 ոտք) գործածական է աւելի Թուրքաց քով, մինչդեռ Հոյք կ'անուանեն ընդհանրապէս խաչափայտի լեռնը կամ պարզ՝ խաչափայտ, արդիւնք աւանդութեան մը՝ որ աղբերականց գոնէ մէկ մասը կը կապէ Հերակի ազտած խաչափայտին հետ: Սակայն Կարնոյ աղբերականց բուն անունն էր՝ Կարնոյ լեռ, ինչպէս աւանդած է արդէն Պլինիոս՝ Capotes (Հմմտ. Հի-բլան, «Հին Հայոց տեղւոյ անունները», եւն, էջ 344. Կիպրոսի ընդարձակ քարտեար՝ «Փոքր-Ասիա», թերթ 2. «Կարնոյ» եւ այլուր): Կիպրոս ինչպէս ուրիշ քարտեաներ ալ՝ Կարնոյ դաշտը հիւսիս-արեւելքէ մինչեւ հիւսիս-արեւմուտք պատող լեռնազիծը կը գրեն Թուրքերէ կոչուող մը՝ որ այլեւայլ ուրիշ լեռանց ալ տրուած է: Կարնոյ այս բազմաթիւ (Սեւ-Ղուր) հետ խաչափայտի քով միացող միւս առաջին Սարազմ լեռը՝ Օսմալը (Թ. II, 228). նման՝ Կիպրոս, եւն: Անոր աղբերակ մասը Շաղ-Օվաճիկ մէջ՝ Թուրքերէ կը կոչուի Օվաճիկ («Գալուսիկ»), որ նոյնպէս բազմաթիւ անգամ տրուած է եւ որոնց մին յիշուած է յաջորդ աղբերակ մէջ:

63 Գերմ. Litschig, անգլ. Liehig (Օսմալը, 204, 354. Լինչ, II, 392, եւն): Կիպրոսի այլեւայլ քարտեաներ գրած էին նաեւ Letschig եւ ասոր համեմատ «Տեղագիր» գրած է՝ «Ընկալեալ նախ զՆուր Դուրը» (= Գուսնի կամ Գոյնիկ), շեղազիլ որ ի Գիւնիկօլայ իջնէ եւ է Մեծ Գուր գետ ըստ նախնեացն (անդ՝ § 23, էջ 16): Լճիկ կամ Լճիկ ոչ միայն անուն է գետոյն, որ Շեղազի լեռան կերճն անդնելէն ետքը կը կոչուի Գիւնիկ, այլ նաեւ հովտին, ու կենդրոնականը այն: Լճիկ կերճը շտապէ՛ կ'անցնի խաչափայտին (Khindris Օսմալը, էջ 204, Khindris ova Լինչի քարտեար եւ II, 389, 392): Նման յորջորջանք կը գտնուի ուրիշ տեղեր, այսպէս՝ խաչափայտի գետակ (Հմմտ. Բիւն, «Բուլան Խ, եւն, էջ 9-10): Կիպրոսի «Ընդարձակը» կը գրէ Chindris (տես վարը): — Խաչափայտ (Կենտրոնական, կը շարունակուի, էջ 110 «Գուր-Կուր, Գուր-Կուր»), Գերմ. գրած է Koslidjan, նոյնպէս Կիպրոսի ընդարձակը Kozlitshan, իսկ Լինչի քարտեար՝ Kuzichan, որուն ջրերուն լեռնազիծը մասամբ միայն ձգորտած է: Գարտեաները կու տան «Pülümer» գետոյ անուն մը, այսինքն՝ Բուր-Կուր (կամ Բուր-Կուր, այժմ՝ Բուր-Կուր, Բուր-Կուր) որ յետոյ կը միանայ Մնիկ, Բիւնոյ հետ: Ճշդիւ հին Մնիկ գետակը գոնէ անոր զլսուող մասը՝ հոս ալ առած է վերը յիշուած Օվաճիկ (Գալուսիկ) յորջորջանքը (Գերմ. Ovadjik եւն), եւ ինչպէս լեռն առած է Muzur ձեւը (Հմմտ. Օսմալը, 5, 7, 342), նոյնպէս գետը՝ Muzur-su (Լինչ, II, 390, 406). Մնիկը («Մուզուր») — Մերջան լեռնագծին մասին՝ Հմմտ. անդ, II, 386-388, 390-392, 402: Գետը յետոյ՝ Բերիկէ վար՝ կը միանայ Գիւնիկի հետ եւ միասին կը կազմեն Բերիկ-Ղուրը (Peri-su) եւ այնպէս կը թափուին Արածանի: — Գիւնիկ կը ընդհանրապէս գրուած է Kighi, անուն գաւառին՝ նաեւ ընդարձակ մտքը (Վերին եւ Վարի հին խաչափայտ) եւ արդի կենդրոնականը (Kighi Kasaba), եւ գետոյն՝ Kighi-su (Հմմտ. Լինչ, II, 376, 380, 389-393, 405-406, եւ այլուր): Քանի որ գետոյն վերնամասը Լճիկ վար կը կոչուի, այլեւայլ քարտեաներ ամբողջ գետը ուստի նաեւ «Գիւնիկ» մասը կը կոչեն Litschig-su. Բայց Կիպրոսի յիշեալ ընդարձակ քարտեար Գիւնիկի մասին մասն իբր անորոշ կիտարեալ նշանակած է, իսկ ամբողջ գետոյ անունը գրած է՝ Enderis-tsai: — Իրաւացի կ'երեւայ անուշա Ն. Արտնի գիտողութիւնը թէ այս

(Արտալէս), Ղուլուչանի եւ Օվաջլի արգաւանդ խորանիտներէն կը բաժնէ Տարսիմի (Տէրսիմ) հողաբաժնին բարձրաբերձ, հերձաքարերէ կազմուած՝ վերամուղ բարձրացած շուրթը (3000 մետր), որուն երեսին վրայ Գուսնիկ (Դոյնուկ), Բիլի (Կեղի), Մ'նձուր («Մուզուր»), Մոզաթ (Մոզան) եւ Թաղար⁶⁹ գետերը հետեւողական ընթացքով վար կը հոսին, եւ հողաբաժնին ստորտը՝ Ալաւանի կը թափուին: Հոս՝ Սեւձորի («Սիմձոր»), Բարուի եւ Մոզաթի աւազաններուն մէջ ծովային մրրախաւեր կը գտնուին:

Ի վերջոյ պէտք է մասնանշիշ ընել այն

Enderis, որուն եզանակաորունքը ըլլայ վերը յիշուած Khindris կամ Chindris ova, նոր յորջորջանքներ ըլլան, ծագած հին անունէն՝ Երթուլ, ինչպէս կը կոչուէր խորձենոյ զորանիտ-բերքը, զոր շինած ու գրաստիտ ըսած էր Յուստինիանոս (Վրոկոպիտ, Շէ. Գ. 3 «Գաւառին Կեւեւը կար գիւղ մը Artaleson անուն», եւն): Հմմտ. N. Adontz, Armenia w' Epochu Justiniana. Petersburg 1908, p. 13, 19-22 եւն: Բերդին արդի տեղը տակաւին չէ քննուած:

69 Բիլի եւ Մնիկ գետերը յիշուցանուին Գուսնի կամ Գոյնիկ արդի անունն է գետոյն որ համանուն վիճակէն (հին՝ Արաճունիկ) սկսելով կ'անցնի Ճապաղլը (հին՝ Հալտեանք) եւ կը թափուի Արածանի: Gunek կը գրէ Լինչի քարտեարը գետը, համանուն բերքը եւ վերնակողման վիճակը (Հմմտ. նաեւ II, 389, 392, 406): Ուրիշներ կը գրեն Günek, եւն, եւ Հ. Ղ. Ինչիճեան խօսելով Կեղու Օբոր Գիւնիկ մասին կը գրէ՝ «սահմանակից Կեղուի վիճակին Մշտն (Հմմտ. նոր Հայաստան, էջ 108), եւ Կիպրոսի այլեւայլ (հին) քարտեաներն ուրոյն նշանակած են վիճակը՝ Gjöinüig յորջորջանք: Շատ տարբեր չէ նաեւ Կիպրոսի նորագոյն քարտեանին ձեւը, այն է՝ Göinüg. Հովտի վերնակողման մէջ նշանակուած է հին ամուրին Citharizon տեղը, այսինքն՝ Կիտարի կամ Կիտարի (Հմմտ. Հի-բլան, «Հին Հայոց», եւն, էջ 136, 138-140 եւն): — Խաչափ, հին խաչափ յորջորջանք է ինչպէս գետոյն՝ նոյնպէս կենդրոնականը Տարսիմի (Հմմտ. Հի-բլան, անդ, էջ 157-189). գրուած Գերմ. Chosat (Կիպ. Chozat, Լինչ Khozat, Օսմալը, էջ 478): — Չմկաճագի ջուրը գրուած է Գերմ. Tagar, նոյնպէս Լինչի քարտեար՝ Tagar C., բայց համանուն գիւղը՝ Tahar. Լուազոյն է Կիպրոսի ընդարձակին ձեւը՝ Taghar: — Անցողակի նշանակներ Չիլիճեան գրչութիւնը Կիպ. Tshimish gezek, Լինչ Chemish gezek (Օսմալը, էջ 457) եւ նմաններ: Չեւի կողմանէ խնդիր մը շուրի Բաւա, գրուած Palu (Հմմտ. Լինչ, II, 391-392, 413, 416, 425, եւ քաղաքին արեւելակողմը՝ Palu-Dagh, անդ՝ էջ 387, Օսմալը, էջ 9, 384): — Աւելի կարեւոր էր գիտնալ թէ ինչպէս ծագած է Գերմ. Simsor, զոր Լինչի քարտեան ալ իբրեւ կարեւոր տեղ մը նշանակած է այս ձեւով՝ յիշեալ Գուսնի կամ Գոյնուկ գետի վրայ, Ճապաղլը մէջ: Թեւեւ այս Simsor անցած է նաեւ քանի մ'ուրիշ քարտեաներու ալ, սխալ ձեւ մըն է ի վերջոյ՝ Լուազոյն է Ռուսական քարտեան մը՝ Siw-sor. Բայց ուղիղ ձեւը կու տայ Կիպրոսի ընդարձակը՝ նոյն տեղը գրելով Sevsor, ուստի՝ Սե-Յոր: — Ի հարկէ նաեւ խաչափայտ գրուած է՝ Kharput, Karput եւն ձեւերով: Թ. Թ.

կէտը թէ հայկական բոլոր մեծազոյն հրաբուղններն երեւան կուզան դժի մ'երկայնքը, որ երկատու թեան (կիման) զիծը կը կազմէ այն աղեղին, որ Անտիտարուսեան ծալքերուն դէպ ի Իրանեան ծալքերը ծուռմէն յառաջ կու գայ, այսպէս՝ օրինակի համար՝ Արարատ (5205 մետր), Թոնարիկ (Թանտուրիկ, 3600 մետր), Սիփան (4216 մետր) եւ Նիմրուտ⁷⁰ (3057 մետր)՝ իւր հսկայական, 8 քիլոմետր արամազիծ ունեցող խառնարանով, ինչպէս նաեւ Կարաջա (Սեւա) լեռան (2020 մետր) սեւակճեայ վիթխարի գանդուածը՝ Տիարպէքիլի մօտ, Տալուսի հարաւային ծայրը: Երկատու թեան այս գծին վրայ, այսինքն՝ Բայազէտի մօտ, կը գտնուի Հայաստանէ ծանօթ միակ վերակուտակումը (Überschiebung): Այս տեղ

70 Անցողակի նշանակներ թէ Nimrud լեռնանունն անուշա նախ իբր Նեբրովթ ըմբռնուած է, եւ նոյն անունն առած են ուրիշ լեռներ ալ, յատկապէս Nimrud-D. Լեռն՝ ուր Անտիոքոս Ա. Կոմագենեայ կանգնած է իւր Յիւստատանի Ստարապետու եւ Ծոփաց արքայից (Հմմտ. K. Humann եւ O. Puchstein, Reisen in Kleinasien etc., Berlin 1890, pp. 424 եւ Atlas՝ 53 Տիտ. եւ 3 քարտեաներ Կիպրոսի): Բայց մեր կարծեօք հոս Նիմրուտ անունն ներքեւ ծածկուած ըլլալու է հին Նոյն անունը: Մեր մէջ Նոյն ի վերջոյ յորջորջանք եղած է Ծաղիկոյ լեռանց կից համեմատաբար աննշան լեռան մը, որմէ դժուար է ըսել թէ ինչպէս կրնար տարածուիլ յատկապէս Գասականաց քով նոյն անունն ունեցած ընդարձակ նշանակութիւնը (Հմմտ. նաեւ «Արարատ», էջ 511-512): Որովհետեւ ինչպիսի չկայ թէ Գասականաց Niphates Տալուսեան շղթան կը նշանակէ աւելի կամ նուազ ընդարձակութեամբ եւ յատկապէս Տիարիսի աղբերակը բաժինը (Հմմտ. Հ. Ղ. Ինչիճեան, Մեծ Հայք, էջ 403-404), հետեւաբար նաեւ Սասնոյ լեռները՝ ոչ շատ հեռու Նիմրուտէ: Շատ անուանց պէս Մոսիո՝ եւ խնդիր չկայ նաեւ Նոյն անունները գաղթած են արեւմուտքէ արեւելք, յատկապէս հարաւարեւմուտքէ հիւսիսարեւելք: Ինչպէս հարաւային Հայաստանի Մոսիոն նախ հասած է Վանայ ծովու եզերքը՝ Նիֆ Մոսիոն կամ Սիֆոնի եւ ի վերջոյ անցած՝ Ալաւ Մոսիոն կամ Արարատի, նոյնպէս Niphates-Նոյն՝ Տալուսեան շղթայէն անցած է Վանայ ծովու եզերքը՝ Սիֆոնայ գրայի եւ նոյնպէս անհառու Նիֆոնի, եզերքը Սիֆոնայ գրայի եւ Տիարիսի հարաւային լեռանց հիւսիսը, եւ Տիարիսի գալուսի Նոյն լեռին՝ Բագաւանի (Իււն-քիլիսե) եւ Տիարիսի (հին՝ Տաւեանս, «Արարատ», 517) միջեւ: Ուստի այս վերին Նոյն եւ Մոսիոն-Արարատ վերջին հանդիսանան են նոյն անունն, միջին օղակ՝ Նոյն-Նիմրուտ եւ Մոսիոն-Սիփան: — Անցողակի նշանակներ թէ Համմերի Օսմ. Պատմութեան կից քարտեար ինչպէս Սիֆոն-Ծոփայնը կը կիչէ Sebban, նոյնպէս Նիմրուտը՝ Nimrod եւ ասոր իբրեւ աւելի հին ձեւ Nimvan (Հմմտ. Jos. v. Hammer Geschichte des Osmanischen Reiches, I, Pesth 1834, եւն): Տես նաեւ՝ վերը՝ Աւելին այս տեղ մեր նպատակէն դուրս է: Թ. Թ.

սեպ իջնող Նուազարդեակը մըլուած եւ հորիզոնական զրիւք վերախուտակուած է գրեթէ զազաթնահայեաց կեցած Դրամասեցեաց-կրեւուն վրայ:

(Շարունակելի):

Հ. Յ. Տ.

ՍԿԵՒՈՇՅԻ ԱՆԵՏՐԱՆԸ 1197 ԹՈՒՆՎԱՆԵՆ ԼՂՈՂԻ ՀՈՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍԱՐԱՆԻ ԳՐԵԳՈՐԵԱՆԻ ՄԷՋ

(Նպաստ մը հայ մանրանկարչութեան պատմութեան):

1. Բանի մը խօսք:

Լեհաստանի հանրապետութեան Լվով (Lwów, գերմ. Lemberg, Հին Հայոց՝ Իլով) քաղաքի Հայ Արքեպիսկոպոսարանի Գրադարանը հին ժամանակներէ ի վեր խնամով կը պահէ հայ մանրանկարչութեան սքանչելի յուշակերտ մը, նկարազարդ Աւետարան մը, որ գրուած է 1197/98 թուականին Սկեւոպի վանքին մէջ:

Անոր նկարազարդութիւնը եւ նկարներու ցուցադրութիւնը մինչեւ օրս չէ ներկայացուած հայ գեղարուեստագէրներուն:

Անցեալ դարուն սկիզբը, երբ Հ. Մինաս Բժշկեան¹ կու տար ակնարկ մը Լեհաստանի հայ գաղթականութեան ժամանակակից կեանքի վրայ, յիշատակութիւն չէր ընէր Աւետարանի մասին. հաւանօրէն այն ժամանակ զեռ չէր մտած Աւետարանը Հայ Արքեպիսկոպոսարանի Դիւանը:

Ուաջին անգամ տեսած է Աւետարանն Հ. Ռաֆայէլ Պարոնչ, անդամ Վիեննայի Միխիթարեան Միաբանութեան, 1877ին, որ ընդօրինակելով անոր Յիշատակարանները մի մի օրինակ զրկած է Վիեննայի եւ Վենետիկի Միխիթարեան Հայրերուն: Հ. Ղ. Ալիշան իւր Միսոսանի մէջ (էջ 74, 98) երկեցս կը յիշատակէ ձեռագիրս, շատ համարում քաղուածներով Յիշատակարանէն:

Աւետարանի մանր նկարազարդութիւնը կը պարտիմ Հ. Գրիգորիս Գալէմբերեանին, որ 90ական թուականներուն այցելելով Լվով, իւր գովելի սովորութեամբ հետաքրքրուած է անով եւ կազմած ճշգրիտ նկարազարդութիւնը: Հ. Գալէմբերեան չէ հրատարակած, սակայն, իւր այս ցուցակազարդութիւնը. ես գտայ զայն իւր անախ պաշտօնագրութիւններուն մէջ:

Երրորդոյն ժամանակներս Աւետարանիս վրայ խօսած են J. Strzygowski եւ Joséf Piotrowski². վերջինս տուած է նաեւ համարում նկարազարդութիւն մը Ձեռագրին եւ հրատարակած է մանրանկարներէն 7 նկար միագոյն: Strzygowski, որ խոստացած էր³ առանձին ուսումնասիրութիւն մը նուիրել Աւետարանի մանրանկարներուն, մինչեւ օրս տուած է միայն նմոյշներ անոր մանրանկարներէն⁴: Երկու նկար ներկայացուցած է նաեւ H. Glück⁵:

Մեր աշխատութիւնը պիտի ըլլայ այս տեղ՝ յեցած Հ. Գալէմբերեանի եւ J. Piotrowskiի տեղեկութիւններուն վրայ, ներկայացնել Ձեռագրին նկարազարդութիւնը, Յիշատակարաններուն ամբողջական հրատարակութիւնը եւ մանրանկարները, որքան անոնք մատչելի եղան մեզի վերոյիշեալ երկասիրութիւններէն: Պիտի կցենք այս ցուցադրութեան նաեւ համեմատ գիտողութիւններ եւ նկատողութիւններ:

Ձեռագիրը անձամբ տեսնելու բախտ չեմ ունեցած: Ձեռքիս տակ եղած նիւթերով թոյլ չեն տար ճշգրիտ գաղափար կազմել Ձեռագրին հնագրական հանգամանքերու եւ յատկապէս մանրանկարներու մանրամասնութիւններու եւ գունաւորման մասին: Իմ ընթերցողներուս ներողամտութիւնը պիտի խնդրեմ, եթէ Ձեռագրիս նկարազարդութիւնը հակառակ իւր ամբողջութեան, մանրամասնութիւններուն մէջ գոհացուցիչ չնկատուի:

2. Ձեռագիրը:

Թուղթֆ՝ 426: Մեծութիւն՝ 29 X 22 սմ.: Նիւթ՝ սպիտակ մագաղաթ: Կազմ՝ 31 X 24 սմ. փայտակող, կարմիր թաւիչով պատած, ատաս արծաթով կոստղած: Առաջակողմէն չորս անկիւնները չորս աւետարանիչներ մեծագիր. մէջ տեղը՝ խաչերութիւն, Մարիամ եւ Յովհաննէս առ ոտս խաչին. վրան գրերն՝ S W Պատկերները միացած են իրարու տալիակ եւ հաստ արծաթով, նոյնպէս կողմն եզերքները պատած են երկու մաս լայնութեամբ արծաթով եւ ունին արծաթեայ կողկապ, որոնց ականջները խլուած են: Յետ-

² Katedra ormiańska we Lwowie w świetle restauracji i ostatnich odkryć. Lwów 1925, էջ 10—11 եւ նկար 33—40: Այս նկարներէն հինգն կիւնէները հաճեցաւ հեղինակը ի ձեռն Գեր. Տ. Պօղոս Վ. Գրք. մըքեանի դիւն արամազրութեան տակ, որուն համար կը յայտենմ հրապարակաւ իմ շնորհակարտութիւնը:

³ J. Strzygowski, Kleinarmenische Miniaturmalerei, S. 43.

⁴ J. Strzygowski, Amida. Beiträge zur Kunstgeschichte des Mittelalters von Nordmesopotamien, Hellas und Abendlande (հրատարակուած կից հետեւեալ գործին՝ Max von Berchem, Amida. Matériaux pour l'épigraphie et l'histoire musulmanes du Diyar-Bekr), Heidelberg 1910, էջ 362, 369. եւ իւր Ursprung der christlichen Kirchenkunst, Leipzig 1920, տախտակ XXIV.

⁵ H. Glück, Die christliche Kunst des Ostens. Berlin 1923, նկար 6 եւ 7.

¹ Ժամանակագրութիւն ի Լեհաստան, Վենետիկ 1830:

սակողմը կը տեսնուին նոյնպէս չորս պատկերներ՝ չորս լատին սուրբեր. մէջ տեղը Աստուածածինը Յիսուս գրկին, S W վերտառութեամբ, միացած իրարու թանձր եւ լայն արծաթով: Բոլոր արծաթը ոսկեգոծուած է: Կողերուն նմանահանութիւնը տուած է Piotrowski, անդ, նկար 32—34: Գիր՝ խոշոր երկաթագիր՝ միջակ մեծութեամբ: Զարդափրֆ՝ չորս Աւետարաններու սկիզբը,

կու կողմերը կը կարդացուին Մ Ռ : Կիսախորանին կէս եռաբոլորակին տակ կը տեսնուի: Ք T ապա՝ «Աւետարան ըստ Մատթէոսի»: EKKA MATΘEOΣ 130 ա, 207 ա, 327 ա: Ամբողջ երեսները գեղազիր գրչութեամբ: Լուսանցազարդ՝ չորս Աւետարանիչներու սկիզբը եւ տեղ տեղ լու-



Նկար 1. Սկեւոպի Աւետարան, 1197:

թղ. 12 ա «Գ» հրէշտակ ձեռքին գիրք. 130 ա «Ս» հրէշտակ թեւաւոր առիւծի վրայ. 207 ա «Բ» թեւաւոր ցուլ. 327 ա «Թ» (տե՛ս նկար 8, 11): Նաեւ բնագրին մէջ շատ տեղեր. գանազան ձեւերով: Խորաններ՝ թղ. 2 ա—10 եւսերեայ թղթին եւ Համաբարբառի խորանները՝ թղ. 11 ա—10: Բարձրագոյն, ճաղկազարդ, ոսկեխառն բարձրագոյն մանրանկարներով: Թուղթ մը (11) կտրուած հանուած: Կիսախորանի՝ 12 ա, մէջ տեղը Յիսուսի անձինք, գլուխը լուսարձակ խաչով, որուն եր-

տանցքներու վրայ: Մատթէոսի սկիզբը փոքր բոլորակներու մէջ՝ Յիսուս, Դաւիթ, Աբրահամ, Իսահակ եւ Յակոբ: Նկարք՝ թղ. 11 բ, 129 բ, 206 բ, 326 բ, չորս Աւետարանիչներ (տե՛ս նկար 6—10): Բարձրագոյն լուսանցազարդ մանր նկարներ բնագրին մէջ ցրել: Դատարկ՝ թղ. 1, 419, 425, 426: Ժամանակ՝ ՈՅԷ = 1197: Գրիչ՝ Գրիգոր Մլիճեցի Տեղի՝ Մլիճի անապատ եւ Սկեւոս: Ստացող՝ Ստեփանոս կրօնաւոր քահանայ: Տեղեկութիւն՝ Աւետարանն կը պահուի Լվովի